

Վայոց Ձոր



Վայոց Ձորի տարածքը նախկինում մտել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի մեջ, կազմելով նրա Վայոց Ձորի գավառը: Որոշ ժամանակ եղել է Օրբելյան և Պողոջյան նախարարական տների ժառանգական կալվածքը: Ռուսաստանին միանալուց հետո կազմում էր Երևանի նահանգի Շարուր-Դարալագյազի գավառը:

Վայոց Ձորի մարզը աչքի է ընկնում բնակչության ոչ միայն ամենափոքր բացարձակ թվով, այլև ամենացածր խտությամբ ՀՀ-ում:

Հնագիտական պեղումներով պարզվել է, որ Վայոց Ձորի տարածքը

բնակեցված է եղել բրոնզի դարից սկսած: Այն նույնպես բազմիցս ենթարկվել է օտար նվաճողների ասպատակությունների ու ավերածությունների: Եղել են զանգվածային ջարդեր ու բռնագաղթեր: Փոխվել է բնակչության թվաքանակն ու կազմը: Հայ բնակչության առաջին զանգվածային վերադարձը տեղի է ունեցել 1828-1829թթ.: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Պարսկաստանի Խոյ և Մալմաստ գավառներից այստեղ հիմնադրված հայ ընտանիքները ավելացրին մարզի բնակչության քանակը:

2008թ-ին «ՀԿՀ»-ի կողմից վերանորոգման համար առաջադրվող դպրոցների մասին տեղեկություններ:

Վայոց Ձորի մարզ, գյուղ Յերմոն

1. Շին. նախահաշիվ կա: Այն կազմել են մարզի շին. վարչությունը(իմ կողմից վերնայման ընթացքում է):
2. Ես տեսել եմ դպրոցը և մանրամասն ուսումնասիրում եմ նախահաշիվը:
3. Նախահշվում նախատեսված են բոլոր աշխատանքները:
4. Դպրոցը բաղկացած է մեկ մասնաշենքից: Դպրոցի մի մասը մեկ, իսկ մյուս մասը երկու հարկանի է:
5. Մեր կողմից վերանորոգման համար առաջադրվել է դպրոցը ամբողջությամբ:
6. Տանիքը ամբողջությամբ սև թիթեղից է և փթած: Այն անհրաժեշտ է ամբողջությամբ փոխել և ցինկապատել:
7. Դպրոցի էլեկտրականությունը լավ վիճակում է: Անհրաժեշտ է մասնակի վերանորոգել:
8. Դպրոցը նախատեսված է ջեռուցել էլեկտրականությամբ:
9. Հատակները նախատեսված է, մասամբ վերանորոգման և մասամբ մոնլաթապատման:
10. Ջուգարանները առայժմ դրսում են: Տարածքում ջուր կա և անհրաժեշտ է ներսում երկու զուգարան վերանորոգել:
11. Դռներ վերանորոգվում են, և մասամբ փոխվում:
12. Պատուհանները այլուձևից են: Անհրաժեշտ է միայն երկրորդ ապակիները տեղադրել:
13. Դպրոցը կառուցվել է 1979թ.
14. Գյուղում ապրում են 290 բնակիչ:
15. Դպրոցում սովորում են 40 աշակերտ
16. Դպրոցում աշխատում են 10ուսուցիչ և 6 տնտեսական աշխատող:
17. Երևանից մինչև Յերմոն 135կմ է:

Իմ կարծիքով դպրոցը անհապաղ անհրաժեշտ է վերանորոգել: Դպրոցի տնօրենն է պրն.Ժոռա Խաչատրյանը: Իմ կարծիքով վերանորոգումից հետո այն լավ կպահպանեն: Մեր կողմից նախատեսված գումարը լիովին բավարար է այն ամբողջական վերանորոգելու:

Կազմեց՝ Ս.Նալբանդյանը
2008թ.02.14



